

ՄԽԻԹԱՐ ԱՆՆՑԻՆ ՂԱԶՆԱՎՅԱՆՆԵՐԻ ԵՎ ԱՍԽԱՏՈՒԹՅԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ՝

ՏԻԳՐԱՆ ԳՈՅՈՒՄՋՅԱՆ (Քեյրուք)

ԺՔ դարի հայոց պատմիչ Մխիթար Անեցու պատմությունից պահպանվել է ընդամենը մեկ պատահական¹ Սահայն շքացած մասից մի ստվար հատված մեջ է բերում «Տիեզերական պատմության» հեղինակ Վարդանը (մահ. 1271)² Սուլն հոգվածի նյութը կազմում են այդ անտեսված հատվածի բովանդակության և հնարավոր աղբյուրների հետ կապված հարցերը՝

Ելնելով Մխիթարի կենսագրական տվյալներից և պահպանված հատվածում նշված վերջին թվականից (1193 թ.)³ աշխատությունը կարելի է վստահորեն վերագրել ԺՔ դարի վերջին տարիներին, Հատվածի սկզբում Մխիթարը

¹ Սուլն հոգվածը, ամփոփ ձևի մեջ, նախագես ներկայացվել է The Middle East Studies Association-ի 4-րդ տարեկան հանդիպման, որը կայացվեց 6 նոյեմբերի, 1970 թ. ԱՄՆ-ի Օհայո նահանգի Կոլումբոս քաղաքի մեջ։ Սուլն հարցերին հեղինակը արդեն առիթ է ունեցել անդրադառնալու՝ D. K. Kouymjian, „Mxlt'ar of Ani on the rise of Seljuqs“, *Revue des Etudes Arméniennes*, VI (1969), pp. 331—353 (հետագու՝ REArm):

² Պատմություն Սեբեոսի եպիսկոպոսի ի Հերակլե և սկիզբն նորագիտ պատմութեան Մխիթարայ Անեցայ, ի լոյս ած Ք. Պատկանեան, ս. Պետրբուրգ, 1879, էջ Ա—Բ—71։ Բնագիրը պահպանվել է մեկ ձեռագրով (Մաշտոցի անվան Մատենադարան, № 2678)։

³ Մեծին Վառդանայ Բարձրաբերդցայ պատմություն տիեզերական, ի լոյս ընծայեաց Մկրտիչ էմին, Մոսկվա, 1861, թարգմ. Всеобщая история Вардана Великого, перевел М. Эмин, Москва, 1861: Հավաքումն պատմության Վարդանայ վարդապետի լուսարանեալ, Վենետիկ, 1862 (հրատ. Ղ. Ալիշան), Հակառակ Միլդերմանսի կարծիքին (տե՛ս J. Muyldermans, *La Domination Arabe en Arménie*. Louvain/Paris, 1927, էջ 37 և 29, հմտ. REArm էջ 333, ծան. 10) Ղ. Ալիշանի հրատարակությունը, համեմայնդեպս Մխիթար Անեցուն վերաբերող մասը, ավելի բարձր է, քան էմինինը՝ ոչ միայն այն պատճառով, որ Ալիշանի ձեռքի տակ եղած ձեռագրերն ավելի հին են, այլ շնորհիվ այն հանգամանքի, որ վերջինիս գիտելիքները արևելյան լեզուների ասպարեզում ավելի լայն էին։ Որպեսզի այլևս շանդրադառնանք հրատարակությունների հարցին, նշենք որ Ք. Պատկանյանը, Վարդանի մոտ պահպանված հատվածը (էջ 49—52), կցելով Մխիթար Անեցու հրատարակությանը, օգտվել է Ալիշանի հրատարակությունից և ոչ էմինի ինչ վերաբերում է ձեռագրերի ավանդությանը, ապա շուրս հնագույնները՝ Վենետիկի Մխիթարյանների Մատենադարան, № 516 (շուրջ 1300 թ.), № 1244 (1307 թ.) և Վատիկանի գրադարան, Museo Borgano, հայկ. ձեռագիր № 30 (1631 թ.), բայց գուցե 1274 թ. հին օրինակից, Մաշտոցի անվան Մատենադարան, № 3074 (1307 թ.) և քիչ են տարբերվում մեկը մյուսից և հրատարակություններից։ Օգտվելով առիթից, հեղինակը իր շնորհակալությունն է հայտնում Կահիրեի Ամերիկյան համալսարանի Research and Conference Grant Program հանձնաժողովին, որը 1970 թ. հնարավորություն տվեց անմիջապես ուսումնասիրել ինչպես վերահիշյալ, այնպես և այլ ձեռագրեր։

⁴ Հրատ. Պատկանյանի, էջ 2, 46—48, վերադարձված է՝ Գ. Զարբանյան, Հայկական երեք դարերի պատմություն, Վենետիկ, 1897, էջ 725: Կենսագրական նյութը Մխիթարի վերաբերյալ, բացի REArm, VI, էջ 332, ծան. 6, նշված աշխատություններից տեսնել նաև Հ. Աճառյան, Հայոց անձնանունների քառաբան, Գ, Երևան, 1946, էջ 369—370, Գ. Հովսեփյանի հոգվածը՝ Հասկ (Տարեգիրք), I (1948), հատկապես էջ 192—194, P. S. Somal, *Quadro della Storia Letteraria di Armenia*, Վենետիկ, 1829, էջ 108.

տալիս է իր օգտագործած աղբյուրների ցանկը, որոնք ԺԱ—ԺԲ դարերի համար առանց բացառության հայկական են⁵։ Մեզ հայտնի է, սակայն, որ նա ի վիճակի էր օգտվել նաև իսլամական, հատկապես պարսկական սկզբնաղբյուրներից, քանի որ համաձայն և՛ Վարդանի և՛ Մխիթար Այրիվանեցու հաղորդումներին, Մխիթար Անեցիին թարգմանել էր պարսկերենից հայերեն մի գիրք՝ «զպատճառս խաւարման արեգական և լուսնի»⁶։ Ինչպես ցույց կտրվի ստորև, Մխիթարը խնդրո առարկա հատվածը շարադրելիս դիմել է և մահմեդական սկզբնաղբյուրներին⁷։

Երբ մենք դիմում ենք այն հայ հեղինակներին, որոնց անունները նշում է Մխիթարը, այն է՝ Արիստակես Լաստիվերտցի («Պատմութիւն», 1000—1071), Հովհաննես Կոզեռն («Բազրատունյաց պատմութիւն», մոտավորապես 1050, այժմ կորած է) և Սամվել Անեցի («Ժամանակագրութիւն», հասցված է մինչև 1179), ապա տեսնում ենք, որ նրանցից և ոչ մեկը չի հաղորդում այն տվյալները Ղաղսավայանների և Սելջուկյանների մասին, որոնք առկա են Մխիթար Անեցու մոտ⁸։ Հարկավոր է քննության առնել նաև այն հնարավորությունը, որ Մխիթարը կարող էր օգտագործել այլ ժամանակակից հայ հեղինակների, չնշելով նրանց հանվանի-նրանց թվին են պատկանում Հովհաննես Սարկավազը (մահ. 1129, դրած է եղել մի «Պատմութիւն»), Մատթեոս Ուռհայեցին («Ժամանակագրութիւն», 952—1136), Միքայել Ասորին (ասորերենից թարգմանված մի ժամանակագրութիւն, մինչև 1196), Մխիթար Գոշ («Ժամանակագրութիւն», մինչև 1162) և Վահրամ (աշխատության եղանակը և ժամանակը անորոշ)⁹։ Սակայն նրանցից և ոչ մեկը չի պարունակում որևէ կարևոր նյութ

⁵ Հրատ. Պատկանյանի, էջ 15, մանրամասնություններ REArm, VI, p. 334:

⁶ Հաւաքումն պատմութեան Վարդանայ, Վենետիկ, էջ 137. Մխիթարայ Այրիվանեցայ Պատմութիւն ճոյոց ի լոյս ընծայեալ Մ. Էմին, Մոսկվա, 1860, էջ 64, Ալիշան, Շնորհալի և պարագայ իւր, էջ 127, ԸՆԺ դարու ժամանակագրութիւն, Ն. Պողարեան, «Ժամանակագրութիւն (XI—XVIII դդ.)», Բեռլին Մատենադարանի, 9 (1969), էջ 259, հեղինակի անունը տված է «Ո՛ճիէ» ձևով (ի բացառյալ ժամանակագրութիւնից, ուր «Ո՛ճիէ» գրված է), որը մինչ այժմ նույնացված չէ։ 2. Անադյանի կարծիքով, «Ե՛ յսճիէ պարսկի» դարձվածքը կարելի է կարդալ կամ հասկանալ 1127 թ. (կամ 1187 թ.), սակայն այդ տեսակետը անընդունելի է, քանի որ չորս հնագույն ձեռագրերը ճշտվել այն իրրե անձնանուն են հասկանում։ Ավելի հավանական է Բրոսեի կարծիքը. իբր այստեղ պետք է տեսնել պարսկ. سج 21]— «Գիրք աստղաբաշխությանը», որը, սակայն, ենթակա է հետագա ուսումնասիրության. տե՛ս Mém. de l'Acad., IV (1862), no. 9, էջ 5—6, հմմտ. REArm, VI, էջ 333, ծան. 10:

⁷ «Յուլով աշխատեալ եղէ գտանել զորպէսն սուլտանացն՝ որ ի թուրքաց, և գտի շնորհօքն Աստուծոյ այսպէս...», ասում է Մխիթար Անեցին իր շարագրութիւն սկզբում։ Վարդան, Վենետիկ, էջ 94։ Հեղինակի պրպտումները հայ և այլալեզու աղբյուրներում իրոր որ մեծ ջանքեր պահանջեցին։

⁸ Պատմութիւն Արիստակիսի (լատիվերացւոյ, աշխատասիրութիւն մ. 4. Ն. Յուզբաշյանի, Երևան, 1963 և թարգմ. Նորից 4. Ն. Յուզբաշյանի «Повествование Бардана Арцтаксца Ластивертца», Москва, 1968: Կոզեռնի մասին, որը հայտնի է նաև Հովհաննես Տարոնացի անվամբ, տե՛ս էջ 3, ծան. 12, Սամուել Բեռլինի Անեցու ճառքումն ի բոլոր պատմագրաց... հրատ. Ա. Տեր-Միքայելյանի, Վաղարշապատ, 1893: Խիստ հետաքրքրական է, որ Ալիշանը կասկած ունի թէ Կոզեռնի կորած պատմութիւն մեջ Սելջուկյան արշավանքի մասին փաստեր կան, տե՛ս Հայագրութիւն (Վենետիկ, 1901), էջ 90:

⁹ Հովհաննես Սարկավազի մասին տես ստորև. Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն. Վաղարշապատ, 1898 (նախորդի համեմատութիւն մ. Երուսաղեմ, 1869, որակով ավելի բարձր, բանի որ օգտագործվում է ամբողջական քնագիր), ֆր. թարգմանեց է. Դյուլորիեյ, Փարիզ, 1858, Միքայել Ասորի, Երուսաղեմ, 1871, ֆր. թարգմ. Վ. Լանզլուա, Վենետիկ, 1868. Խմբագրութիւնների մասին տեսնել J. B. Chabot, Chronique de Michel le Syrien, 1.

Ղաղնավյանների և Սելջուկյանների վերաբերյալ, հնարավոր բացառությամբ Հովհաննես Սարկավազի, «հնարավոր» որովհետև նրա պատմությունը մեզ չի հասել, նրա աշակերտ Սամվել Անեցու և հետագայում Կիրակոս Գանձակեցու («Պատմություն» մինչև 1265)¹⁰ կողմից բերված քաղվածքներից կարելի է միայն ընդհանուր պատկերացում կաղմել Սարկավազի աշխատության վերաբերյալ, Առաջին քաղվածքը առնչվում է «Սկուտացիներին», այն է սելջուկների հետ. իսկ երկրորդում խոսվում է հատկապես Մելիքշահ իրն Ալի-Արսլանի մասին¹¹, իմ նախորդ աշխատության մեջ (REArm, VI, էջ 334, 350—51) Կողեռն անունը («Կողռանն») սխալմամբ նույնացվել է Հովհաննես Սարկավազի հետ և եղրակացություն է հանվել, իբր Մխիթար Անեցին օգտվել է այդ կարևոր աղբյուրից, Սակայն այժմ, երբ «Կողռանն» անունը պարզորոշ կերպով վերաբերում է Հովհաննես Տարոնացի Կողեռնին¹², առանձին հատվածների նմանությունը գալիս է ցույց տալու, որ Մխիթարը հավանաբար օգտվել է Սարկավազից, իսկ այն եղրակացությունները, որոնք արվել են այդ ենթագրության հիման վրա, զուրկ չեն ուժից, Սարկավազի աշխատությունը գոյություն ունի Մխիթարի ժամանակ, քանի որ վերջինիս ժամանակակից Սամվել Անեցին օգտվել է նրանից, իսկ հետագա գրողները՝ Կիրակոս Գանձակեցին, Վարդանը, Մխիթար Այրիվանեցին՝ հիշում են այն, Սամվել Անեցու և Կիրակոսի մոտ՝ հաստատապես Սարկավազից կատարված մեջբերումներում՝ պահպանվում է (Paris, 1899, (իրականում 1924), էջ L—LI, Մխիթար Գոյ, Թարգմ. C. J. F. Dowsett, «The Albanian Chronicle of Mxitar Gos» BSOAS, XXI/3 (1958), pp. 472—490, Վահրամի մասին՝ տե՛ս REArm, էջ 333, ծան. 12: Ա. Գ. Արքահայրան, Հովհաննես Խմատաճուհի մտնեազրույունը, Նրևան, 1956,

¹⁰ Սամվել Անեցի, էջ 96—98 և Գ. Զարբանյան, էջ 609, Կիրակոս Գանձակեցի, Պատմությունը ճայոց, աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Նրևան, 1961, էջ 84,

¹¹ Գ. Զարբանյան, էջ 609—610. Սամուել Անեցի, անդ, հիմա, REArm, էջ 334, № 18,

¹² Հողվածիս առանձնատիպերին ավելացված հատուկ նոթի մեջ Կողեռնը ճշտվել նույնացվում է Հովհաննես Տարոնացու հետ (ԺԱ դարի հեղինակ), նրա աշխատությունների մի մասը, ի թիվս սրանց նաև Բագրատունյաց պատմությունը համարվում է կորած, Հովհաննես Տարոնացուն հիշում են ինչպես ժամանակակիցները, այնպես էլ հետագա հեղինակները, Ավելի մանրամասն տեսնել Հ. Աճառյան, Անձնանունների բառարան, Գ, էջ 566—567, Միշան, Յուրիկ, II, (երկրորդ տպագր., Վենետիկ, 1921), էջ 267—268, և Գ. Զարբանյան, էջ 570—571. վերջինս զանազանում է Կողեռնին և Հովհաննես Տարոնացուն (էջ 788) հավանաբար կրկնելով այն սխալը, որը կատարվում է նաև Մ. էմինի՝ Մխիթար Այրիվանեցու հրատարակության մեջ. այստեղ հիշված են առանձին առանձին Հովհաննես Կողեռն վարդապետ և Հովհաննես Տարոնեցի վարդապետ (էջ 23), Մատենադարանի № 1775 ձեռագրին մեջ կան Կողեռնի կորսված պատմության սկզբի էջերը (թուղթեր 8բ—16ա), որը կը հայտնե՛ որ այն կը բովանդակե շարադրութիւն պատմութեան տան Բագրատունեաց ի վ[երայ] Հայաստանեաց...» (8բ) և կը շարունակե (9ա). «Եի սկսանել ի շարադրութիւն պատմութեան յաղագս թագաւորութեան տոհմին Բագրատունեաց ի վերայ[] Հայաստան ազգիս... [ժամանակաց զնի ի սկզբանց անտի մինչև յերեք հարիւր ԼԶ ամն թուականութեանս հայոց յորում ամի առաջին թագաւորեաց բարէպաշտն Աշոտ, զոր յիւրում տեղուչն զորպէսն գրեցուք, և անտի յառաջի կարգի զայլն ամէնայն մինչև յաւուրս մեր, զթագավորութիւն տոհմին Բագրատունեաց մի ըստ միողէ կարգաւ և արդ ասացուք այսպէս»։ հիմա. Գ. Արքայան, Բանբեր Մատենադարանի. 6 (1962), էջ 50—51 և նույն հեղինակի «Սեբեոսի պատմությունը» և Անանունի առնչվածը. (Նրևան, 1965), էջ 128—130. Ապա պատմության մեջ կհիշվի Ադամի և Նվալի պատմությունը դրախտում, կը խօսի հրեաների առաջին մարգարեների և թագավորների մասին և կանդ կառնէ (16ա) Քրիստոսի ծնունդին, Հավանական է, որ երկրորդ մասում խօսված լինի Սելջուկյան արշավանքի մասին, ինչպես ենթադրել է Այիշան (տեսնել ծան. 8), որովհետև Կողեռն երկը գրել է շուրջ 1050 թ. Հեղինակը կուզէ շնորհակալության խօսք ասել Մատենադարանի տնօրինությանը, որը ռառո՛հ եղաւ իրեն հայթայթելու Կողեռնի ձեռագրի լուսանկարները:

Սելջուկ անվան արտասովոր մի ձև՝ «Սարչուկ»։ այդ ձևը տալիս է նաև Մխիթարը¹³։ Սակայն փոխառության դեմ էլ կարելի է նշել մի հանգամանք՝ Մխիթարի հատվածներում կիրառվում է հիշրեթ թվագրություն, մինչդեռ Սամվել Անեցու կողմից բերված Սարկավագի հատվածում թվագրությունը հայկական տոմարով է։ Դժբախտաբար Սարկավագի կորած պատմության և Վարդանի մոտ բերված Մխիթար Անեցու կորած պատմության առնչության վերաբերյալ վերջնական կարծիք կազմել ներկայումս անհնարին է։

Այսպիսով պարզ է, որ կամ Մխիթարը, կամ նրա հնարավոր հայ նախորդը (այսինքն՝ Սարկավագը կամ գուցե Կոզեոն) օգտագործել են իսլամական երկերը. գա բացահայտվում է ոչ միայն հիշրեթի կիրառման մեջ (մինչդեռ շախատության մյուս մասերում այդ հանգամանքը բացակայում է)¹⁴, այլև նրանում, որ Մխիթարը համեմատաբար ճշգրիտ ձևով է վերարտադրում մահմեդական անուններն ու տիտղոսները, օգտագործում է բազմաթիվ արաբական և պարսկական բառեր և հաղորդում մանրամասն տեղեկություններ մի շարք միջադեպերի մասին¹⁵։

Որո՞նք էին Մխիթար Անեցու մահմեդական աղբյուրները։ Հարցի պատասխանը կարևոր է Բուլյանների, Ղազնաժյանների և Սելջուկյանների պատմագրության համար, քանի որ Մխիթարը, գրելով իր երկը ԺԲ դարի մայրամուտին, համեմատաբար վաղ սկզբնաղբյուր է։ Նախքան այդ հարցին անցնելը, հարկավոր է տալ մեր հեղինակի՝ թուրք սուլթաններին նվիրված համառոտ շարադրության ամփոփումը։

Մահմուդ իրն Սեբուկտեգինը (Սբքթաեայ) Արտաշիր Սասանյանի նման, զորացավ Բալբ (Բաեմ) քաղաքում, Քուշանների երկրում։ Նրա զորեղության համբավը հասավ խալիֆային, որը երկյուղածության մեջ ուղարկեց նրան ընծաներ և պատիվներ (ալամ և լաղապ՝ Ամինադի)¹⁶ և անվանում է նրան սուլթան։ Մահմուդի հեղինակությունը աճում է, նա ճանապարհ է բռնում դեպի Հնդկաստանի հուշակավոր կուռք Սոմնաթը (Մաթաեայ)¹⁷, որը և ավերում է ու ռազմավարով վերադառնում տուն, թողնելով այնտեղ իր որդի Մուհամմադին (Մամմատ)։ Ապա գրավում Գուրգանը, վերցնելով 400.000 դահեկան և զանձ, նրանց (այսինքն մահմեդականների) 420 [1029]թ.։ Անցնում է դեպի Ռեյյի, քաղաքի տերը՝ Մաշդ ալ-Դավլա Ռուստամը (Մաշա-դավա Ռուսոմ) հավաքած է լինում դելմիկ զորականներ և դուրս է գալիս նրա դեմ։ Մահմուդը, ունենալով հսկայական զորք և 250 փիղ, հարցնում է Մաշդ ալ-Դավլային. «Շահնամա գիրքը կարդացել ես»։ «Այո՛», պատասխանում է նա։ Մահմուդը կրկին հարց է տալիս. «Ծրեկից է շախմատ (նաուրկուզ) խաղացել ես» և նորից պատասխանում է՝ «Այո՛»։ «Թագավորը թագավորի տուն մտնո՞ւմ է, թե՞ ո՛չ»։ Իսկ նա լռում է և ոչինչ չի ասում։ Այն ժամանակ Մահմուդը գերեզմարելով ուղար-

¹³ Մխիթար, հրատ. Պատկանյան, էջ 48 և 51 (Վարդանից), Սամվել՝ էջ 98, Կիրակոս՝ էջ 84։

¹⁴ Հրատ. Պատկանյանի, ամենուր, Գ. Զարհանալեան, էջ 725—726։

¹⁵ Տես բնագրի ստորև բերված ամփոփումը և բանավեճը, REArm, VI, էջ 351։

¹⁶ Այսինքն, արաբերեն ալամ, լաղապ և տիտղոսը՝ Ամին ալ-Ազիլ, որ պիտի լինի Յամին ալ-Դավլա։

¹⁷ Կարելի է ենթադրել, որ հայերեն մաթան՝ անհաշող տառադարձված արաբերեն՝ ماثم, մաեմարե է, ընդհանրապես կուռք, բայց սկզբնապես Քաաբայի հեթանոս կուռքերից մեկը, որին մահմեդական զորոնները սերտորեն (չնայած և սխալմամբ) կապում են Սոմնաթի հետ, նկատի ունենալով հատկապես Մահմուդի արշավանքը այնտեղ 416/1025 թ.։

կում է նրան խորասան, իսկ երկիրը գրավում։ Այնուհետև Մահմուդը անցնում է դեպի Տարաքիստան, Տարաքիս¹⁸ և Սարի։ Իր որդի Մասուդին տալիս է Ռեյյը, Ղազվինը և ամբողջ Քուհիստանը։ Թողնելով Մասուդին Ռեյյում, նա գնում է Սարավ, վերցնում 100.000 դինար և անցնում Նիշապուր նրանց թվագրության 421 [1030]-ին։ Այնուհետև Մասուդը գրավում է Համագանը և Իսպահանը և վերադառնում Ռեյյի, որտեղ իմանում, որ իր ներկայացուցիչը (շահնալ) ¹⁹ սպանել են Իսպահանում։ Դարձյալ գնում է այնտեղ, ոչնչացնում 4000 հոգի և վերադառնում Ռեյյի։ Հենց այդ պահին նրան հասցնում են նրա հոր (այսինքն Մահմուդի) սպանության գույժը և այն, որ իր եղբայր Մուհամմադը դառել է սուլթան։ Մասուդը ապստամբում է, շարժվում Ղազնայի ուղղությամբ, ձերբակալում ու կուրացնում եղբորը և վերականգնում իշխանությունն ու զահը։

Մի առ ժամանակ այդ դեպքից առաջ Մասուդի հայրը երբ շարժվում էր Ղարախանյան Քադիր-խան Բողրա-խանին (խարզան-Պողղան) օգնության, հանդիպում է թուրք մի բանակ, քիչ անց նա վերադառնում է այնտեղ և մեծ հաղթանակ տանելով, ձերբակալում նրանց ամիր Յադուին (զԱփադու) և ուղարկում նրան խորասան։ Ամիրի մարդիկ աղաչում են Մահմուդին և ապա Մասուդին բաց թողնել նրան, բայց ապարդյուն։ Այն ժամանակ զայրացած թուրքերը անցնում են Զահան դետը և գրավում Նիշապուր քաղաքը։ Հետագայում նրանք ջախջախում են սուլթան Մասուդի զորքերը Դանդանականի (Դադանդան) մոտ, ոչ հեռու Մերվից (Մամն)։ Սուլթանը փախչում է Ղազնա, ապա՝ Հնդկաստան, բայց ճանապարհին սպանվում, իսկ նրա կույր եղբայր Մուհամմադը գահ է բարձրանում Ղազնայում, ուր նրա որդիները իշխում են մինչ օրս։

Ինչ վերաբերում է թուրքերի առաջնորդին, որի անունն է Մուսա Յադու (Մուսեփադու) իբն Սելչուկ (Սալչուֆ), ապա նա ուներ հինգ [sic, կարդա երկու] եղբորորդի՝ Աբու Սալիմ (Աբու Սուլեյման պիտի լինի) Դաուդ Չադրի բեգ [և] Աբու Թալիբ Տուղրիլ բեգ (Աբուսալիմ, Դաուդ, Չադրեկ, Աբուսալիփ. Տուղրիլ-բեկ)։ Տուղրիլն էր, որ ստացավ իշխանությունը և բաժանելով խուրասանի երկրները, մնաց իշխանության գլուխ 15 տարի։ Հետագայում Տուղրիլը եկավ Ռեյյի և հայտնաբերեց երկու շտեմարան՝ լքված ոսկիով, գրավեց այն և ուղարկեց խալիֆին։ Վերջինս պատվեց նրան՝ ուղարկելով դեսպաններ, պատիվներ և ընծաներ, նրա անունը ընթերցվեց մինբարից և նա ստացավ Ռուկն ալ-Դավլա տիտղոսը։ Եւ այդ օրվանից նա հռչակվեց աշխարհակալ²⁰։

¹⁸ Հիշված տեղանուններից դժվարությամբ է որոշվում միայն Տարաքին. դա կարող է լինի կամ Տարաք Բուխարայի մոտ (Barthold, *Turkestan*, 3rd ed., London, 1968, էջ 115, ծան.) կամ Դարաք-Ջիրգե՝ Ֆարսի մեջ. տե՛ս Le Strange, *Lands of the Eastern Caliphate* (Cambridge, 1905), pp. 248, 288-289.

¹⁹ Արաբերեն՝ شاذان (շահնալ)։

²⁰ Սուլեյ հատվածը, որը քաղված է Վարդան պատմիչից, հրապարակվել է հայերեն շրջանում. Վենետիկ, էջ 93—97, Մոսկվա, էջ 127—131, Ալշան, Յուշիկ, II, էջ 353—354, Վենետիկի տարբերակը վերարտադրված է Պատկանյանի մոտ, էջ 49—52, Ռուսերեն թարգմ. (Մ. Էմին), էջ 118—121, Ֆրանս. M. F. Brosset, *Additions et éclaircissements à l'Histoire de la Géorgie* (St. Petersburg, 1851), pp. 220—222, Թուրքերեն, H. D. Andreasyan, *Müverrih Vardan Türk Fütuhatl Tarihi* (889—1269). Istanbul Üniversitesi Edebiyat Fakültesi Tarih Semineri Dergisi, 1/2 (1937), p. 169—172, անգլերեն (մասնակի), *REArm*, էջ 339—341.

Բերված հոգվածը պարունակում է տարբեր աղբյուրներից եկող հարուստ տեղեկություններ, որպիսի հանգամանքը ինքնին պահանջում է մանրամասն մեկնաբանություն: Ինչպես ասվեց, Սելջուկյաններին վերաբերող մասը քննություն է առնվում հատուկ հոգվածում (ծան. 1), իսկ Ղազնավյանների հետ առնչվող հարցերը պիտի լուսաբանվեն առաջիկայում: Ներկա աշխատության մեջ բերված են ընդամենը երկու միջադեպ, որոնք պիտի օգնեն մեզ որոշելու Մխիթար Անեցու գրավոր աղբյուրները: Խոսքս Մաջդ ալ-Դավլայի հարցաքննության մասին է՝ Ղոզնավյանների պատմությունից և յլարդուա թուրք տիտղոսի՝ Սելջուկյանների պատմությունից:

Մահմուդ Ղազնավյանի և Մաջդ ալ-Դավլա Ռուստամ իբն ֆաթր ալ-Դավլայի զրույցը լավ հայտնի է իբն ալ-Ասիրի՝ ալ-Կամիլ ֆի ալ-տաթրիխից (ավարտվել է 619/1222 թ.), իր Սայիդա մոր վախճանից հետո (մայրը Ռեյյի քաղաքի իսկական տերն էր) Մաջդ ալ-Դավլան ստանձնեց քաղաքի իշխանությունը: Ինչպես ասվեց, ի վիճակի չլինելով զսպել իր դավլամի շոկատներին, նա օգնություն խնդրեց Մահմուդից: Վերջինս հենց նման առիթի էր սպասում 420/1029 թ. և գրավեց Ռեյյի քաղաքը: Այդ թվականի տակ իբն ալ-Ասիրը հաղորդում է հետևյալ զրույցի մասին: Մահմուդուն պահանջում է բերել իր առջև Մաջդին և հարց է տալիս նրան. «կարդացե՞լ ես, արդյոք, Շահնամե²¹. պարսիկների պատմությունը և Տաբարիի քաթիխը՝ մահմեդականների պատմությունը»: «Այո՛», պատասխանում է Մաջդը, «բայց քո վարվելակերպը չի սաղում մեկին, որ կարդացած լինի այդ գրքերը», ասում է Մահմուդը և շարունակում՝ «բայց դու խաղո՞ւմ ես շախմատ»: «Այո՛», պատասխանում է խոսակցը, «իսկ երբեկից տեսե՞լ ես, որ թագավորը մոտենա թագավորին», հարցնում է Մահմուդը: «Ո՛ր», պատասխանում է Ռեյյի իշխանը. «Հապա ինչո՞ւ, — նախատում է Մահմուդը, — կանչել քու թագավորությունը մեկին, որ քեզինից ուժեղ է» և ասելով այդ, Մահմուդը աքսորում է նրան Խորասան²²:

Չնայած Մխիթարի պատմվածքում բացակայում է այն փաստը, որը իմաստ է տալիս այդ միջադեպին, այսինքն Մաջդ ալ-Դավլայի հրավերը՝ ուղղված Մահմուդին, այնուամենայնիվ այդ հաղորդումը նույնն է, ինչ որ և իբն ալ-Ասիրի շարադրությունը: Բայց հակառակ նրան, որ իբն ալ-Ասիրը գրում է Մխիթարից մոտ երեսուն տարի հետո, ոչ մի հիմք չկա ենթադրելու, որ նա, իբր, օգտագործել է հայ հեղինակին: Այդ դեպքում որտեղից է քաղել իբն ալ-Ասիրը իր պատմվածքը: Նրանից առաջ գրված Ղազնավյան աղբյուրներից և ոչ

²¹ Վերոհիշյալ պատմության մեջ կա սուր հեղնանք. Ֆիրդուսին ավարտել է Շահնամեն շուրջ 400/1009—1010 թթ.: Ներկայացնելով այն Մահմուդի կազմած հատուկ հանձնաժողովին, ըստ բավարարված չլինելով վճարով, բանաստեղծը լքում է Ղազնավյանների արքունիքը և ապաստան գտնում Բուլանների մոտ: Որոշ գիտնականների կարծիքով (օրինակ, Ethé) նա մնում է Ռեյյի, Մաջդ ալ-Դավլայի արքունիքում, տե՛ս E. J. Browne, *A Literary History of Persia* (Cambridge, 1906), II, էջ 141, 181 ծան.:

²² Հրատ. Tornberg (Leyden, 1851—76), IX, էջ 281—283, վերստին տպված Պէյրուսի, IX, էջ 371—372, դիտելը առնվազն երկու անգամ թարգմանվել է. E. G. Browne, *op. cit.*, II, p. 160 և M. Nāzım, *The Life and Times of sultān Mahmūd of Ghazna* (Cambridge, 1931), pp. 82—83

Վերև հիշատակված գրականությունից անկախ, Մաջդ ալ-Դավլայի մասին հավելյալ տեղեկությունների համար տե՛ս K. V. Zettersteen, «Madjd al-Dawla», *Encyclopaedia of Islam*, 1st ed կամ Թուրքերեն *Islam Ansiklopedisi*, VII, pp. 431—432, և G. C. Miles, *The Numismatic History of Rayy* (New York, 1938), pp. 171—197 passim.

մեկը (խոսքս Ուտրի, Բայհաքի, Գարդիղի և անանուն Մուշմալի մասին է)²³ չի հիշատակում այդ դեպքը: Այն կարող էր մտցված լինել Մահմուդի մասին խոսող՝ Բայհաքիի «Մուշալլադատի» մեջ, քանի որ մեղ հասած բաժինը՝ «Մասուդի պատմությունը», սկսվում է միայն 421/1030 թ., սակայն հետագա հեղինակների մոտ, ցավոք, բացակայում են վկայակոչումներ, որոնք հնարավորություն կտային ներթափանցել կորցված մասերը²⁴, Բայց եթէ երբեք է հայտնաբերվեն Բայհաքիի չքացած մասերը կամ անդամ մի նոր պարսկական աղբյուր՝ այդ դեպքում ևս պիտի եզրակացնենք, որ օգտագործողը Մխիթար Անեցին է և ոչ իրն ալ-Ասիրը, քանի որ վերջինս, այնպես կթվի, որ չգիտեր պարսկերեն²⁵,

երկու այլ ենթադրություն կարող են օգնեն լուծելու սույն պատմագրական հարցը: Այդ պատմվածքը կարող էր պահպանել Ալի իբն-Ջալդ Բայհաքի պարսիկը (որը հայտնի է իբն Ֆանդուք անվան տակ)՝ իր «Մաշարիբ ալ-տաշարիբ» գրվածքում, որը գրված է եղել արաբերեն՝ ԺԲ դարի երկրորդ կեսում: Չնայած այդ աշխատությունը մեղ չի հասել՝ հիմք կա ենթադրելու որ նրանից օգտվել է իբն ալ-Ասիրը²⁶, Բայց այդ դեպքում անմիջապես հարց է ծագում իբն Ֆանդուքի աղբյուրի, ինչպես նաև վերջինիս երկը Մխիթար Անեցու կողմից օգտագործման մասին²⁷, երկրորդ հնարավորությունն այն է, որ խալիֆայական կամ Բաղդադի արաբերեն ժամանակագրությունը կարող էր պարունակած լինել մի

²³ Ութրի, ալ-Բադիս ալ-Յամինի, գրված արաբերեն, նախքան իր մահը (431/1039—1040), հրատ. (Կահիրե, 1869), պարսկերեն թարգմանությամբ Զուլբազանի (Ե. 602/1206, հրատ. A. Qawim (Tehran, 1955). Արուս-Ֆադլ Բայհաքի (385—470/995—1077) Թադիս-ի Մասուդին կը պարունակէ հազիվ հինգը ենթադրաւ 30 հատորնոց պատմության, Մուշալլադատէն, պահպանված մասը կընդգրկէ 421/1030—433/1041, Գարդիղիի Զայն ալ-Ախպարը գրված էր 444/1053 թ. առաջ ու դեպքերը կը հասցնէ մինչև 432/1041, Անանուն Մուշմալը գրվել է 520/1126 թ., համաձայն Փարիզի Ազգային Մատենադարանում պահպանված միակ ձեռագրին, Հեղինակը շնորհակալություն է հայտնում պրոֆ. Ս. Է. Պոսվերտի (Մանչեստրի Համալսարան), որը Գարդիղիի երկերից (հրատ. Մ. Նազիմ, Բեքլին, 1928, էջ 90—91) և Մուշմալի (հրատ. Պահար, Քեհրան, 1939, էջ 403—404) մասերի նկար-պատճենները ղրկեց:

²⁴ Քննություն մը Բայհաքիի ռուսերեն թարգմանությանը՝ երկրորդ և մշակված հրատարակության (ed. A. K. Arends, Moscow, 1969), որի հավելվածի մեջ կան Մուշալլադատի կորսված մասերից 19 հատված, որոնք հետագայում մեջբերված են այլ հեղինակների կողմից, ցույց կտա, որ դեպքի մասին ոչ մի ակնարկություն չկա:

²⁵ C. Cahen, «The Historiography of the Seljuqid Period», *Historians of the Middle East*, edited by B. Lewis and P. M. Holt (London, 1962), pp. 65—66. Ամեն պարագայի, կը թվի թե գորավոր աղացույց կա, որ իբն ալ-Ասիրի եղբայրը՝ Տիյա ալ-Տին գիտեր պարսկերեն (տես G. Von Grunebaum, *Islam, Essays in the Nature and Growth of a Cultural Tradition*, London, 1961, pp. 109 n. 9 և 178), և հետեւաբար, կարող է պատահել, որ իբն ալ-Ասիրն ալ գիտենար:

²⁶ Cahen, *ibid.*, p. 66.

²⁷ Անշուշտ Մուշալլադատի չքացած մասը միտք կիւնա, բայց այլ կարելիութուն է Պուլիտ Վեզիր Աբու Սա'դ Մանսուր իբն ալ Հուսեյն ալ-Աբի, որին անանուն Մուշմալը հիշատակել է որպէս աղբյուրներից մին, Արուս Մա'դի մասին տե՛ս Bosworth, «On the Chronology of the Ziyarids in Gurgan and Tabaristan», *Der Islam*, 40/1 (1964), p. 30, n. 10. Գալով Մխիթարի կողմից իբն Ֆանդուքի կամ արաբական այլ աղբյուրի օգտագործման հարցին, մենք չունենք փաստացի ապացույց, որ նա չգիտեր արաբերեն, ունենք դրական փաստ, որ նա հեշտօրէն կարող էր օգտագործել պարսկերենը (*supra*, n. 6): REArm-ի մեջ լռելայն եզրակացվել է, որ Մխիթարը հավանօրէն օգտագործել է պարսկական աղբյուրներ այս ամփոփ պատմության համար: Ամեն պարագայի, հարցը դեռևս ամբողջությամբ եզրակացված չէ և կրնա պատահել, որ նա նմանպէս օգտագործել է արաբական աղբյուրներ:

պատմվածք, հատկապէս Հիլալ ալ-Սարիի «Պատմությունը» (հասցնում է մինչև 447/1055 թ.), որից պահպանվել է միայն մի մասը, 388—393/998—1003 թթ. վերաբերող: Այդ երկը օգտագործել են և մասամբ պահպանել Իբն ալ-Ջաուզին («Ալ-Մունտազամ», 6/12 գ.), Սիբտ Իբն ալ-Ջաուզին («Միրասատ ալ-զաման», 7/13 դ.), և անանուն մի ժամանակագրություն (644/1246—7 թ.) Մյունխենի պետական գրադարանում²⁸, Իբն ալ-Ջաուզիի երկում կա նաև այն Ֆաթնաման, որը կաղմել է տվել Մահմուդը և Ռեյյի քաղաքի գրավումից հետո ուղարկել Խալիֆին²⁹: Չնայած շարագրությունը շատ մանրամասն է, սակայն չի հիշատակվում ընդհարումը Մաշդ ալ-Դաւլայի հետ: Կարող է թվալ, որ մեղ հետաքրքրող միջադեպի բացակայությունը Իբն ալ-Ջաուզիի մոտ (որը հարում է ալ-Սարիին) բացառում է այդ դեպքի առկայությունը նաև Սիբտ Իբն ալ-Ջաուզիի կամ Մյունխենի Անանանի մոտ. վերջնական եզրակացություն կարելի է անել միայն այդ երկու հեղինակների ձեռագրերը մանրամասն ուսումնասիրելուց հետո:

Վերջին ենթագրությունը, իբր այդ պատմվածքը կարող էր ամբողջությամբ հորինված լինել ԺԲ—ԺԳ դարերի արանքում, թվում է անհավանական, քանի որ այն առկա է երկու մեկը մյուսից բոլորովին անկախ հեղինակների մոտ: Այսպիսով մենք վերադառնում ենք մեր ելակետին՝ առանց համոզիչ տեսակետ հայտնելու այդ միջադեպի ծագման վերաբերյալ:

Մխիթարի երկից մեր երկրորդ օրինակը վերաբերում է Սելջուկ Յազդուի նույնացմանը: Այդ տիտղոսը գալիս է առնվազն Ը դարից, պատկանում է Քյոք թուրքական համամիությունը, հիշատակվում է Որխոնի արձանագրություններում և վերաբերում է այն պաշտոնին, որը գալիս է «Քաղանից»՝ արքայից անմիջապես հետո: Քյոք պետական միավորման քայքայումից հետո, Օղուզ թուրքերը, որոնք այդ միավորման բաղկացուցիչ տարրերից մեկն էին, պահպանում են այդ «յաբդու» տիտղոսը և սկսում են այդպես անվանել իրենց առաջնորդին: 4/10 դ. վերջերին, երբ Սելջուկ թուրքերը անջատվում են Օղուզ յաբդուից, վերջինիս մայրաքաղաքը գտնվում էր Յենգի-կենտում, Սիր-Դարյա գետի ներքին հոսանքում, Արսլան-Իսրայիլ (որդի Սելջուկի) յուրացնում է յաբդու տիտղոսը, ասես մարտի հրավիրելով իր երբեմնի դաշնակիցներին և միաժամանակ շեղելով իր տոհմի աճող զորեղությունը: Այդ տիտղոսը սովորաբար կրում էր տոհմի ավագ արու անդամը, և Արսլան-Իսրայիլը այդ ժամանակ իրոք որ ավելի մեծ էր տարիքով քան Մուսան, Սելջուկի երկրորդ կենդանի մնացած որդին³⁰:

28 Ալ-Մունտազամ, մասնակիորեն հրատարակված (Հայտարարագատ, 1938—1941): Մի-րադ ալ-Ջաման, ցարդ որի միայն Մեծ Սելջուկների վերաբերող մասն է հրատարակվել, տե՛ս M. Ali Sevîm, *Mî'râtü 'z-Zeman fi Tarih ü'l-Ayan* 447/1056-479/1086 (Ankara, 1968), որին քննարկել է C. Caheh, «A propos d'une édition,» *Arabica* XVII/1(1970), pp. 82—91: Մյունխենի անունը չի հրատարակվել, սակայն ձեռագրին ու նրա բովանդակության մասին ակնարկություն կարելի է գտնել՝ M. Kabir, *The Buwayhid Dynasty of Baghdad* (334/946—447/1055), (Calcutta, 1946), p. 216, and *passim* չիլալ ալ-Սապիի պատմութեան քննարկում մը կարելի է գտնել Գահենի երկին մեջ, էջ 70—72:

29 Սույն Ֆաթնաման (ալ-Մունտազամ, VIII, էջ 38—40) լրիվ թարգմանվել է Պոսլորտի կողմից՝ «The Imperial Policy of the Early Ghaznavids», *Islamic Culture*, 1/3 (1962), էջ 70—72:

30 Այս մասին հավելյալ տեղեկություն, նյութին վերաբերյալ լրիվ գրականությամբ, կարելի է գտնել REArm-ի մեջ, էջ 337—338:

Դեռևս պարզ չէ, արդյո՞ք Օղուզների առաջնորդ Յարղուն, որին հիշատակում է Գարգիղին որպես 391/1003 թ. Ղարախանյանների դեմ դուրս եկած Սամանյան իշխան՝ Արսլանն էր թէ ինքը՝ Օղուզ Յարղուն. այսպես թե այնպես³¹, 416—7/1025—6 թ., երբ Արսլանը դերի ընկավ Մահմուդ Ղաղնավյանի ձեռքը. նա կրում էր այդ տիտղոսը, Դա հայտնի է ոչ միայն «Աբբար ալ-Դավլաթ ալ-Սալջուկիյա» աղբյուրից (7/13 դ. սկզբից), որի մէջ կականարկվի նրան որպէս «Արսլան Յարղու որ կուի Իսրայել»³², այլ և նույն Մխիթար Անեցուց, որը անվանում է նրան Ափաղու, այն է Յափղու Քանի որ Մխիթարը գրել է իր պատմութիւնը «Աբբարից» մի քարտորդ դար առաջ, այդ աղբյուրը անկախ է և միաժամանակ կապ է հաստատում ինչ-որ ավելի վաղ և այժմ կորած աղբյուրի, թերևս «Մալիկնամեի» հետ³³:

431/1040 թ. դեպքերի նկարագրութիւններից մենք իմանում ենք, որ Մուսա իբն-Սելջուկը կրում էր Յարղու տիտղոսը: Հեղինակը պարզորոշ կերպով նրան դրսևորում է որպես թուրքերի առաջնորդ³⁴: Վաղ աղբյուրներից, ուր հիշատակվում է Մուսան, միայն Մխիթար Անեցին և «Սելջուկնամեի» հեղինակ (6/12 դ. երկրորդ կես) Զահիր ադ-դին Նիշապուրին³⁵ են որ ճշտիվ նույնացնում են նրան ինչպես Սելջուկ Յարղուի, այնպես էլ Տուղրիլ բեգի և Զադրի բեգի հորեղբոր հետ: Մխիթարի հաջորդ շարադրութիւնից պարզ երևում է, որ նա դիտում է Տուղբիլին իբրև հետ-Դանդանականի շրջանի Սելջուկյան տոհմի ամենից զորեղ անդամ: Այնուհանդերձ նա երբեք չի անվանում նրան Յարղու, ուստի պարզ է, որ մենք չպիտի դիտենք Մուսային իբրև մեկին, որին կարելի չէ «աշխույժ չորակել»³⁶:

Ի հարկե, խոսելով Յարղու տիտղոսի և սելջուկներին վերաբերող այլ մանրամասնութիւնների մասին, մենք չենք կարող նույնչափ ճշտորեն ապացուցել Մխիթարի հեղինակութիւնը, ինչպես դա հնարավոր է լինում, երբ մենք վերադառնում ենք Ղաղնավյանների պատմութիւնը: Սակայն, այն ընդհանուր եղրակացութիւնները, քննելով հնագույն հայ տեղեկութիւնները Ղաղնավյանների վերաբերյալ, տարածվում են նաև Սելջուկյանների վրա: Թվում է, թե այն պատկերը, որը ներկայացնում է հայկական տեղեկութիւնը Սելջուկյանների մասին, ավելի համապատասխանում է պարսկական աղբյուրների Զահիր ալ-Դին խմբին (այդ աղբյուրները անկախ են վերականգնված «Մալիքնամեից») քան իբրև՝ «Մալիքնամեի», չնայած նմանութիւն կա այդ վերջին երկին և հայկական տեղեկութիւն միջև³⁷: Հարցի լուծումը մնում է դեռևս անբավարար:

³¹ Հրատ. Մ. Նազիմ, էջ 64. REArm-ի ծանոթութիւններից (էջ 338—339, ծան. 42—45) բացի տես նաև՝ Cahen, „Arslan b. Saldjuk, E. I. 2.

³² Թուրքերեն թարգմ., N. Lugal (Ankara, 1943) էջ 2—3 և REArm, էջ 342, ծան. 73.

³³ Տես Cahen, „Le Malik-nameh et l'histoire des origines seljukides“, *Oriens*, 11 (1949), էջ 31—63, REArm-ի բնագրում, էջ 332 և *passim*.

³⁴ Հավելյալ մի կետ (REArm-ի մեջ չէ հիշատակվել) է այն պարագան, որ Մխիթար Այրիվանեցին (էջ 22), ելնելով հավանաբար Մխիթար Անեցու տվյալներից, տեղավորում է Մուսա Յարղուին (Մուսեփաղոյ) Սելջուկյան հարստութիւն ցուցակի սկզբում: Բուն ժամանակագրութիւն մեջ (էջ 55) 901 թ. հետո [sic] նա նորից է հիշում Մուսա Յարղուին՝ «... և զօրացաւ Թուրքմանն Սալլուքն և Մուսէ Փաղոյն և Դոզլարէկն»:

³⁵ Երկին գրեթէ բառացի թարգմանութիւնը կարելի է հանդիպել ալ-Ռավանդիի Ռահմալ-Սուրուրում (6/12 դ. վերջերին), հրատ. M. Iqbal (London, 1902), էջ 102, 104. cf. REArm, էջ 336, ծան. 34 և 346, ծան. 91.

³⁶ Cahen, *Pre-Ottoman Turkey* (London, 1968), էջ 20, և REArm, էջ 346—347.

³⁷ Մանրամասնութիւնց համար տես REArm, էջ 352—353.

Կարող է այն տպավորությունը ստացվի, իբր, գոյություն է ունեցել վաղ շրջանի այլ սելջուկյան սկզբնաղբյուր, այժմ կորած, որից կարող էր օգտված լինել կամ Մխիթարը, կամ իր նախորդ Հովհաննես Սարկավազը, գուցե և Կոզեռնը: Ինչպես ասվեց այլ տեղ (REArm, vī, pp. 348, 352—353 և վերը՝ էջ 11) այդպիսին կարող էր եղած լինել Արուս-Ալա Մուհամմադ իբն Հասսուլի, Մաջդ ալ-Դավայի վեզիրի (մահ. 450/1058) «Ժամանակագրությունը», որը 420/1038 թ. հետո Ղազնավյանների, իսկ հետագայում Տուղրիլի պաշտոնյան էր Ռեյյի բազաբում³⁸, Հայկական սկզբնաղբյուրների տեսակետից իբն Հասսուլը հետաքրքիր է շնորհիվ այն հանգամանքի, որ իր մյուս գոյություն ունեցող աշխատության մեջ՝ «Ռիսալայում», որը պիտի լիներ «Ժամանակագրության» նախաբանը, նա Մխիթարի նման ցուցաբերում է (բայց հակառակ Զագրի-բեգին փառաբանող «Մալիքնամայի») ինչ-որ համակրանք Տուղրիլի նրկաամամբ³⁹ և, որ ավելի կարևոր է, սելջուկի համար Մխիթարի և Սարկավազի նման նա օգտագործում է հազվագեղ (իսլամական աղբյուրների համար) «Սարջուկ» (سرجك) և ոչ Սելջուկ (سلجوق)՝ ձևը⁴⁰: Նաև, եթե պիտի հաւատանք Ռավերթի Զյուղանիի «Թաբաթաթ-ի Նասիրի» թարգմանությանը մէջ երեցած նոթին, ուր ըստ Արուս-Ալա Ահմադի (կարգալ՝ Հասսուլ) «Պատմությանը», Սելջուկ ուներ շորս որդիներ՝ Բարայիլ, Միքայիլ, Մուսա-ի-Բեղու (sic, կարդալ Մուսա-Յարդու)... և Յունուս⁴¹: Իրականում, «Պատմությունը» հիշատակվել է Համտալլա Մուստաֆի Քազվինիի կողմից, նրա «Թարիխ-ի Կյուզիդե» գործին Սելջուկյանների նվիրված բաժնի առաջաբանում (8/14 դ. առաջին կես)⁴²: Իբն Հասսուլի «Պատմության» ձեռագիրը կարող է դեռևս գոյություն ունենա, քանի որ Ռավերթի հիշատակում է օգտագործած լինելը⁴³, Անշուշտ որ երկը գրված լինելու է արաբերենով, ինչպես իբն Հասսուլի «Ռիսալան» և անշուշտ կրկին հարց պիտի լինի Մխիթարի արաբերենի ծանօթ լինելը: Եթե կարելի է հավատք ընծայել Ռավերթի գրություններին, որոնց մեջ նա կը հավաստիացնէ «Պատմությունը» տեսած լինելը, այդ ժամանակ ավելի հավանական կը դառնա «Պատմության» գոյությունը (գուցե պարսկական պատշաճեցումը) ընդունելը: Եւ ուրեմն, քանի որ իբն Հասսուլը պաշտոնավարել էր Ղազնավյանների մոտ Ռայյում, կրնա ըլլալ որ այս «Թարիխում» տեղեկություն լինի Մահմուդի կողմից քաղաքի գրաման մասին և, անհավանական չէ,

³⁸ Bosworth, *The Ghaznavids* (Edinburgh, 1963), p. 59.

³⁹ Հրատ. Ա. Ազգավի, Թուրքերեն թարգմանությամբ Շ. Յալքալայի, *Belleten*, IV (1940), էջ 250—266 և 51 էջ արաբերեն տեքստից: Հեղինակին ու գործին մասին լրիվ քննարկում մը տեսնել Գահենի մոտ, «Le Malik-nāme», էջ 37—38:

⁴⁰ Ռիսալա, տեքստ էջ 49, թարգմ. էջ 265: Ռիսալայի սույն մասը անգլերենի թարգմանել է D. M. Dunlop, *The History of the Jewish Khazars* (Princeton, 1954), p. 259; cf. Bosworth, *Ghaznavids*, էջ 220 և REArm, էջ 348, ծան. 103: Հայերեն օգտագործման համար տես վերը, էջ 2 և K. H. Menges, *The Turkic Languages and Peoples* (Wiesbaden, 1968), էջ 26:

⁴¹ H. G. Raverty, *The Tabakat-i Nasiri* (London, 1881—1899), էջ 116—116, ծան. 3:

⁴² Հրատ. (նմանագիր—facsimile) և համառոտ թարգմ., GMS (London, 1910—1913), էջ 434: Հիմնական հարցը իբն Հասսուլի Պատմությանը բացարձակապես վստահ ըլլալուն, հաւաստեցումն է Համտալլա Մուստաֆիի հիշատակած անուան, այսինքն՝ Արուս-Ալա Ահմադ, Արուս-Ալա Մուհամմադ իբն Հասսուլի հետ, տե՛ս Cahen, «Le Malik-nāme», էջ 37 38:

⁴³ *Ibid.*, էջ 117, ծան. 3:

նույնիսկ հեղինակի նախորդ տիրոջ՝ Մաշդ ալ-Տավլայի մասին եղած պատմությունը, Այսպիսի պարագայում, Իբն Հասսուլի «Պատմությունը» կարող էր մեծապես ծառայել որպես հիմք Մխիթարի Ղազնավյանների ու Սելջուկյանների մասին տված տեղեկություններին⁴⁴:

Ինչպես էլ ընթերցողը վերաբերի վերոհիշյալ հետևություններին, կասկածից վեր է, որ Մխիթար Անեցու շարադրությունը թուրք սուլթանների մասին՝ բովանդակալից և վստահելի աղբյուր է և այն եթէ ուշադիր քննարկման ենթարկվի կարող է պարզաբանել որոշ հարցեր ոչ միայն հայկական, այլև իսլամական պատմագրության վերաբերյալ:

МХИТАР АНИЙСКИЙ О ГАЗНЕВИДАХ И СЕЛЬДЖУКАХ

ТИГРАН ГОЮМДЖЯН (Бейрут)

Р е з ю м е

Из «Истории» Мхитара Анийского сохранился лишь один фрагмент, но в «Космической истории» Вартана Аревельци приводится пространственный отрывок из нее, посвященный Газневидам и Сельджукам. Исходя из биографических данных Мхитара Анийского и заключающей отрывок даты (1193 г.), «Историю» его следует датировать концом XII в.

Использование в означенном отрывке мусульманского лунного календаря, верное прозвание имен и титулов, подробные сведения о ряде событий свидетельствуют о том, что автор «Истории» пользовался мусульманскими, особенно персидскими первоисточниками, среди которых «Муджалладат» Баяхаки и «История» Ибн-Хассула.

Дополнительность сведений, сообщаемых Мхитаром Анийским, придает его труду важность при выяснении некоторых вопросов армянской и мусульманской историографии.

⁴⁴ Պոսվորտ նույնպես կը մեկնաբանէ (նամակ 10/X/70). «Այս հարցը առեղծված կը մնա, և ես կարող չեմ առաջարկել որևէ ակներև լուծում, բացի նրանից, որ ալ-Արիկ [supra, ծան. 28] կամ Իբն Հասսուլը անհկտոտին հավանական պատմողներն են»: